

«ԹԱՐԳՄԱՆՉԱՑ» ԱՆՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Լ. Ձ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հայկական մշակույթի մեծարժեք հուշարձաններից մեկի՝ «Թարգմանչաց» կոչվող նշանավոր ավետարանի գրչության վայրի որոշումը մինչ այժմ չի արժանացել մասնագետների պատշաճ ուշադրությանը:

1916 թ. այդ ավետարանը էջմիածին է բերել Գարեգին Հովսեփյանը Գանձակի Թարգմանչաց վանքից, այնուհետև մուծվել է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական ֆոնդ՝ 2743 համարի տակ:

Ձեռագրի սկզբնական հիշատակարանը որևէ տվյալ չի հաղորդում գրչության վայրի մասին. ավանդությունը այն կապում է Սյունիքի կամ Արցախի հետ, ըստ երևույթին նկատի ունենալով մատյանի երկրորդ տերերին՝ Արցախի իշխան Գրիգոր Դոփյանին և նրա տիկնոջը՝ Սյունյաց Տարսայիճ իշխանի դուստր Ասփային:

Բարբախտաբար խորանների սյուների վրա նույնպես կան կարճառոտ հիշատակագրություններ, որոնց մեջ հիշվում է ոմն պարոն Հովհաննես՝ ձեռագրի բուն պատվիրատուն: Իսկ ո՞վ է այս պարոն Հովհաննեսը:

«Պատուական քահանայ» և «երեւելի պարոն» տիտղոսները, որոնցով մեծարվում է այս Հովհաննեսը, ակնարկում են նրա ազնվականական ծագման մասին: Գարեգին Հովսեփյանի ենթադրությամբ Հովհաննեսը Դոփյան իշխանական տոհմից էր և, թերևս, հենց այն Ուհան երեցը, որի որդին՝ Դոփը հիշատակված է Փոքր Սյունիքի Մար Բյուղի Ս. Սարգիս մատուռի հետևյալ արձանագրության մեջ. «Ի պարոնութեան Դուփին որդոյն Ուհան երեցու՝ Սակայն կարելի է, և թերևս ավելի ճիշտ կլինի հիշատակվող Ուհան երեցին համարել ոչ թե Դոփի հայրը, այլ որդին: Մանավանդ, որ Դոփյանների տոհմաբանության մեջ չի հիշատակվում այլ Դոփ բացի Սարգիս սպասալարի դուստր և Ղարա Գրիգորի կին Դոփից:

Արձանագրությունն այսպես է հասկանում նաև Կարապետ Տեր-Մկրտչյանը՝ Դոփյաններին նվիրված իր ուսումնասիրության մեջ: Հիմնվելով Մարի և այլ արձանագրությունների վրա, նա իրավացիորեն նշում է, որ Ուհան երեցը Դոփի և Ղարա Գրիգորի որդին էր, եղբայրը Հասան իշխանի²: Հետագայում ձեռնադրվելով եպիսկոպոս, նա դարձավ առաջնորդ Հաղբասի վանքի, որ իր մոր դերդաստանի կենտրոնական վանքն էր: Այստեղ՝ մեծ եկեղեցու գավթում գտնվող տապանաքարերից մեկի վրա պահպանվել է մի արձանագրություն, ուր հիշվում է Հովհաննես եպիսկոպոսի մայր Դոփը³: Այս Հովհաննեսի և նրա

1 Գարեգին Ա կաթողիկոս, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 886.

2 «Նյութեր հայ մելիքության մասին», գրեց Կարապետ եպիսկոպոս, Ս. էջմիածին, 1914, պրակ Բ.

3 «Հնախոսական տեղագրություն Հաղբատա», Վաղարշապատ, 1886, էջ 25.

եղբայր Հասանի արձանագրությունը պահպանվել է հաթրա վանքի տաճարի պատին⁴։ Հենց Հասանի որդի և Դուփի թոռ Գրիգորն է, որ XIV դ. սկզբին ղեկել է «Թարգմանչաց» ավետարանը։ Այսպիսով, անտարակույս է, որ Ուհան երեցը Դուփի և Ղարա Գրիգորի որդին է, այնինչ բննարկվող ձեռագրի պատվիրատու՝ Հովհաննեսը որդին է ոմն հաշիկի՝ Բացի այդ, ձեռագրի հետագա տերեր Գրիգոր իշխանը և տիկին Ասփան նշում են, որ ավետարանը «յարդար ընչից իւրոց» ղեկելու նվիրաբերել են հաթրա վանքին, ուր գտնվում էր իրենց ընտանեկան դամբարանը։ Այս փաստն իսկ կասկածի տակ է ղնում ձեռագրի ի սկզբանե Դուփյան տոհմին պատկանելու հանգամանքը։

Ձեռագրի զեղանկարչության որոշ առանձնահատկություններ հուշեցին մեզ պատվիրատուին փնտրել Հայաստանի արևմտյան շրջաններում։ Եվ իսկապես, XIII դարի առաջին կեսին Կարինում ապրում էր Հովհաննես անունով մի պարոն՝ Ումեկյան նշանավոր զերդաստանի ազգականներից։

Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին գրում են, որ 1242 թ., երբ մոնղոլները զրավեցին Կարինը, Ումեկյանները զաղթեցին Արևելյան Հայաստան. «Ի վեց հարիւր իննսուն և մի թուին հայոց Բաշունուինն փոխեաց զիշխանութին Չարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երեւելի մեծատուն եւ երկիրդած ի տեառնէ զՈւմեկն և զազգականս նորա՝ զորդիս պարոն Յոհաննու զՍտեփաննոս և զեղբարսն իւր հինդ»⁵։ Գանձակեցու պատմության մեջ այս տեղեկությունը որոշ չէ րնագրի ազավազված լինելու պատճառով։ Ստացվում է, որ Հովհաննեսը և Ստեփանոսը Ումեկի որդիներն են։ Կ. Հովսեփյանը ճշտում է այն ըստ Վարդան Արևելցու, վկայակոչելով միանգամայն համոզիչ փաստարկումներ⁶։

Պայրոն Հովհաննեսի որդի Ստեփանոսը և իր հինգ եղբայրները, հաստատվելով Արևելյան Հայաստանում, ձեռք են բերում նոր տիրույթներ Լոռու շրջանում և ծավալում շինարարական գործունեություն։ Նրանց կառույցներից մեկը՝ հորակերտի տաճարը, այժմ էլ կանգուն է։ Արևմտյան զուռն ճակատի ընդարձակ արձանագրությունը վկայում է, որ Հովհաննեսի որդի Ստեփանոսը ղեկել է հորակերտը իր շրջակա գյուղերով և կառուցել տաճարը⁷։ Ծատ հավանական է, որ պարոն Հովհաննեսի որդիները, տեղափոխվելով Արևելյան Հայաստան, իրենց հետ բերել են իրենց զեթյաստանին պատկանող ավետարանը, որը հետագայում, ղեպքերի բերումով անցել է Դուփյանների ձեռքը ու դարձել նրանց սոհմական սրբությունը։

Դառնանք ձեռագրի ծագկողին. նրա մասին հիշատակագրությունը ասում է. «ՏԼր Աստուած ողորմեա Գրիգոր նկարչի և աշխատողաց ի սմայ»։ Մի Գրիգոր նկարիչ հիշատակված է 1230—1232 թթ. Թեոդոսուպոլսում նկարադարդված ձեռագրի կապակցությամբ (ձեռագիրն այժմ պահվում է Վենետիկի

⁴ «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան», աշխատասիրութեամբ Տեառն Սարգսի Սանահնեցոյ Զալախանց, Տփլիս, 1858, մասն Բ, էջ 230։

⁵ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 363։

⁶ Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, Երուսաղեմ, 1935, պրակ Ա, էջ 11։

⁷ Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., էջ 12։ Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանյանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 121։

lԴխիթարյանների գրադարանում № 325/129)⁸։ Այդ ձեռագրի մանրանկարների մեծ մասը, դժբախտաբար, չի պահպանվել։ ձեռագրում այժմ կան միայն երկու կիսախորաններ և մի քանի լուսանցազարդեր։ Եվ դժվար չէ նկատել պահպանված կիսախորանների, ավետարանիչների խորհրդանիշների և լուսանցազարդերի բացառիկ ոճական նմանությունը «Թարգմանչաց» ավետարանի նույնանուն նկարաթերթերի հետ։ Կրկնվում են զարդանկարչական մոտիվներն ու զարդագրերը, հատկանշական քառատերև կամ շրջանակաձև լուսանցազարդերը՝ հավելյալ ցողուններով։ Թվում է, թե նույնն է նաև օգտագործված ներկապնակը՝ «Թարգմանչացի» զուսպ, նուրբ ու բարձր ճաշակի արտահայտություն գունաշարը, անկրկնելի կապույտով։

Հայաստանի արևելյան շրջաններում XIII դարում ստեղծված այսպիսի ինքնուրույն գեղագիտական մտածողության արդյունք հանդիսացող գործեր մեզ հայտնի չեն։ Նույնիսկ Վանենի իշխանուհու պատվերով 1224 թ. Աբցախում ընդօրինակված փառահեղ ավետարանի մանրանկարները կատարված են ոճական ու գեղագիտական այլ սկզբունքներով։

«Թարգմանչաց» ավետարանի նման գործեր իրոք կարող էին երևան գալ մտավոր բարձր կյանքով հագեցած արվեստասեր մի միջավայրում, ուր նկարիչը հանդես էր գալիս որպես ստեղծագործող անհատ և նույնիսկ կրոնական թեմատիկայի ոլորտով սահմանափակվող նրա որոնումները արդեն ինչ-որ չափով կրում էին անհատական բնույթ։ Այսպիսի միջավայր էին հանդիսանում Արևմտյան Հայաստանի աշխույժ տնտեսական և մշակութային կյանքով ապրող քաղաքները՝ Կարինն ու Երզնկան։

1269 թ. Երզնկայում Սարգիս եպիսկոպոսի պատվերով գրված բարձրարվեստ ավետարանի կողքին կարելի է ենթադրել մոտավորապես նույն շրջանում Կարին քաղաքում «Թարգմանչաց» ավետարանի ստեղծման հնարավորությունը։ Այս մատյանի յուրաքանչյուր մանրանկարի ինքնուրույն գեղագիտական արժեքը վկայում է գրքային արվեստի սահմաններից մանրանկարչի դուրս գալու ձգտման մասին։ Հաջորդ առաջընթաց քայլով հայ արվեստը կարող էր թևակոխել հաստոցային նկարչության զարգացման շրջանը, որը սակայն կանխվեց քաղաքական ահեղ ու կործանարար իրադարձություններով։

Վենետիկի № 325/129 ձեռագիրը նույնպես մոտավոր պատկերացում է տալիս Կարին քաղաքում տիրող գեղարվեստական մթնոլորտի մասին։ Այդ ավետարանի թե՛ գրիչը, թե՛ ծաղկողը Գրիգորն է. որպես սեփականատեր հիշվում է նորից նկարիչը իր հայր Խաչատուր քահանայի հետ։ Ըստ երևույթին Գրիգորը եղել է բարեկեցիկ մի վարպետ, որն իր առավել սիրելի ստեղծագործությունը դարձրել է ընտանեկան սեփականություն։ Այս փաստը ինքնին խոսում է հասարակական կյանքում նկարչի դերի բարձրացման մասին, մի բան, որը Կարին ու Երզնկա քաղաքներում տնտեսական կյանքի աշխուժացման պայմաններում միանգամայն հնարավոր էր։

Բնորոշ է նաև, որ ծաղկողը մենակ չի աշխատել ձեռագրի ստեղծման վրա։ Բացի երկու ավետարանների ոճական նմանություններից, ծաղկողի անվան նույնությունից, այս հանգամանքը ևս մի կովան է մեզ համար Կարինի և «Թարգմանչաց» ավետարանների մանրանկարները վերագրելու նույն

⁸ Այդ ձեռագրի մանրանկարները գունավոր վերարտադրված են Վենետիկում հրատարակված «Հայկական մանրանկարչության» ալբոմում։

Գրիգոր ծաղկողին: «Թարգմանչացում» ևս նկարիչը խնդրում է ողորմել «Գրիգոր նկարչին և աշխատողաց ի սմայ»:

Արդեն 1230-ական թթ. Գրիգորը հավանաբար հասուն, ճանաչված վարպետ էր և ուներ աշակերտների մի խումբ:

Անմիջապես Թեոդոսուպոլսի ավետարանին հաջորդող «Թարգմանչացի» պարագայում (որի աշխատանքները ըստ երևույթին սկսվել են 1232 թ.) վարպետն ինքը որպես գրիչ հանդես չի գալիս: Զեռագրի գրիչը Տիրացուն է. թերևս սա նույն այն գրիչն է, որ 1205 թ. հարբերգում օգնական է եղել Կողմա գրչին մի ձեռագրի արտագրման աշխատանքների ընթացքում: 1232 թ. Կարինում նա, անշուշտ, կարող էր հանդես գալ որպես ինքնուրույն և հմուտ գրիչ:

Այս բոլոր փաստարկումները, թերևս, թույլ են տալիս ենթադրելու, որ «Թարգմանչաց» ավետարանը գրվել է Կարինում, մի ժամանակաշրջանում, երբ «բոլոր ժողովուրդների գլխին պայթեց ամենասոսկալի դժբախտությունն ու ամենամեծ աղետը»⁹, 1220 թ. արդեն սկսվել էին մոնղոլական արշավանքները դեպի Անդրկովկաս. Հայաստանը ավերվում էր երկուստեք՝ մոնղոլների և խորեզմի շահ Ջալալեգգինի զորքերի կողմից: 1225—1226 թթ. վերջին նրանք անընդհատ ասպատակում են Կարինի շրջանը. 1229 թ. մոնղոլները Ջալալեգգինի զորքերին հալածելիս ավերածության էին մատնել Արծնն ու նրա հարևան շրջանները:

Ժամանակի այս ողբերգությունն է, որ դառնալով մեծ արվեստագետի անձնական ողբերգությունը, տազնապի ու անկայունության զգացումով է ողողել նրա ստեղծագործությունը, ահավոր ճակատագրի կնիք դրոշմել հերոսների դեմքերին, նրանցից յուրաքանչյուրին հաղորդելով նկարչի միտքը, ողբական այս արտահայտությամբ. «Աւաղ, աւաղ եւ հազար աւաղ դառնութեան ժամանակիս»:

⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց. Վենետիկ, 1914, հատ. Ա, էջ 400:

¹⁰ И б н - а л - А с и р, Тарих ал-Камиль, Баку, 1940, էջ 134—136: